ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆ ՊԻՏԻ ԼԻՆԻ

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ– Ազատամարտիկ, 32 տարեկան, հաշմանդամ:

Թոպերաական հրապարակում ես երկար կանգնել չկարողացա, զգացի, որ ինձնից անկողմնակալ դիրքորդ չի ստացվի: Ձենքը վերցրի ու հայրենիքիս սահմանները գնացի պաշտպանելու: Հայաստանի համարյա բոլոր սահմաններում կռվել եմ: Իսկ թեւս Արցախում կորցրի: Ձեմ զղջում: Թեւս կորցրել եմ, բայց լավ ընկերներ եմ ձեռք բերել՝ մեծ ախպերություն ենք: Ճիշտ է, եղել են պահեր, երբ հուսահատվել եմ, երբ զենքը շպրտել ու փուն եմ վերադարձել: Բայց երկար չեմ կարողացել մնալ՝ երեխաներիս մի-մի պաչիկ եմ տրել ու նորից կռվի դաշտ մեկնել... Ասել եմ՝ հերն էլ սահիծած: Թող որ կեսն էլ պարագիրի նման ուշի ու տրաքվի: Ասել եմ՝ ֆեսենդամը, թե ազգի գլուխների մի ոչ ու փուչ մասն էլ մեր նման զրաների ձեռքով է կրակից շագանակ հանում՝ վնաս չկա: Վնասն էն կլինի, որ մեր գրեթում նստենք ու մեր կանանց փեշի տակից նայենք մեր շեմի վրա եկող թուրքին: Դոռուտխոս ու շահամոլ զրաների շարությունից երբեք չեմ նեղվել: Որովհետև... շատ էլ չեն: Ու խրատատի իմ ընկերների անվախ-զրամարդկությունից եմ ոգեւորվել: Բայց եւ լացել եմ: Երանց անվերադարձ-կորուստից եմ զրամարդավարի լացել:

Էլքն ես պարեզմի ավարտի մեջ եմ գնում: Վախենում եմ, թե կշարունակվի էս անարդ պարեզմը եւ մեր լավ զրաները...կդակասեն: Թալանչիներն ու պորտաբույծները կշարունակեն: Չինկոմիսարիատի ներկայացուցչից պահանջեցի մեջ թաքնվողը դուրս կգա ու... ձիավորված քաջ-նոգարները կշարունակեն Երեւանի փողոցներում...

Հետ հարցված ու ազնիվ բժիշկներ ունենք հանրապետությունում: Որոնք պատրաստ են մեր՝ ազատամարտիկներիս համար իրենց կյանքը զոհել: Բայց կաշառակեր ու քծի բժիշկներ էլ ունենք: Երկու անգամ եմ անդամահատվել: Կաշառակեր բժշկի երեսից: Ձեռքս արդեն փրում էր, բայց մոտ չէր գալիս: Ուզում էր, որ հարազատներս իրեն «տրեսենեին»: Իսկ իմ հարազատներն անպեղյակ էին: Գլխից ու որովայնից էլ էի վիրավորվել: Կոնտուզիա էի ստացել: Էդ վիճակում ինձ ուղղաթիռով Երեւան, այնուհետեւ հիվանդանոց էին տեղափոխել՝ օրերով հիվանդանոցի մահճակալին անարդ պառկած եմ մնացել՝ հարազատներս որտեղի՞ց պիտի իմանային իմ մասին: Որ իմանային էլ, որտեղի՞ց իրենց 200 դոլար, որ տային բժշկին: Ու պաշտպանության նախարարությունն արդեն մի քանի կաշառակեր բժշկի հերն անիծել է՝ գիտենք, շնորհակալ ենք: Բայց պիտի կարգ ու կանոն լինի: Պիտի որ մեզ՝ ազատամարտիկներիս, մեր ընտանիքներին մի քիչ ուշադրություն դարձվի: Որ ուրիշները չասեն՝ ինձ պետք է՞, ես գնամ-կռվեմ, հաշմանդամ դառնամ, ընտանիքս էլ սոված կոտրվի:

Նոր ձեռք հո չե՞նք ուզում: Ընդամենը սրբագրավ վերաբերմունք ու կարգ ու կանոն ենք պահանջում:

Գրի առավ
Ա. ՊԱՀՐՍՍԱՆՅԱՆԸ